



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

24 սեպտեմբերի 2025 թվական

ք.Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԵԴ1/1475/01/25 քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2025 թվականի սեպտեմբերի 12-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. 2025 թվականի ապրիլի 29-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան է ստացվել Ահարոն Լյովայի Ալվանդյանի և Մնացական Խաչիկի Ներսիսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-290-րդ

հողվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով թիվ 69124723 (ԵԴ1/1475/01/25) քրեական վարույթը:

1.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր Գ.Պողոսյան) 2025 թվականի մայիսի 5-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/1475/01/25 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի սեպտեմբերի 2-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ԵԴ1/1475/01/25 քրեական վարույթն ըստ տարածքային ընդդատության Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին:

2. Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Վ.Սուդյան) 2025 թվականի սեպտեմբերի 12-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/1475/01/25 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

3. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի սեպտեմբերի 19-ին:

Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

4. Ահարոն Ալվանդյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 46-290-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքի համար, որ «(...) [Ն]ա, հանդիսանալով բեռնատար ավտոմեքենայի վարորդ և տեղյակ լինելով, որ *****, *****, և **** * -ները, «*****» ՍՊ ընկերության տնօրեն *****-ը, «*****» ՍՊ ընկերության տնօրեն *****-ը, «*****» ՍՊ ընկերության տնօրեն *****-ը և «*****» ՍՊ ընկերության տնօրեն *****-ը նախքան հանցանքն սկսելը համաձայնության են եկել համատեղ *****-ի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետության տարածք մաքսային հսկողությունից թաքցնելու, ներմուծված ապրանքների ոչ հավասարի

հայրարարագրման եղանակով ապօրինի հագուստներ ներմուծելու և այդ կերպ առանձնապես խոշոր չափերով հարկեր չվճարելու շուրջ՝ խոչընդոտներ վերացնելով օժանդակել է նրանց՝ իրականացրել ապրանքների փոխադրում, որի արդյունքում *****-ի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն ապօրինի ներմուծվել է ընդհանուր առնվազն՝ 301.558.427,6 դրամին համարժեք 742.654 ԱՄՆ դոլար մաքսային արժեքով 140.616 կիլոգրամ հագուստ, որի արդյունքում պետական բյուջե չի վճարվել առանձնապես խոշոր չափերով առնվազն՝ 104.692.129 դրամի մաքսատուրք և 76.631.541 դրամի ավելացված արժեքի հարկ, ընդհանուրը՝ 181.323.665 դրամ:

Այսպես.

*****, ***** և *****-ները, «*****» ՍՊ ընկերության տնօրեն *****-ը, «*****» ՍՊ ընկերության տնօրեն *****-ը, «*****» ՍՊ ընկերության տնօրեն *****-ը և «*****» ՍՊ ընկերության տնօրեն *****-ը նախքան հանցանքն սկսելը համաձայնության են եկել համատեղ *****-ի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետության տարածք մաքսային հսկողությունից թաքցնելու, ներմուծված ապրանքների ոչ հավասարի հայրարարագրման եղանակով ապօրինի հագուստներ ներմուծելու շուրջ: Բեռնատար ավտոմեքենայի վարորդներ *****-ի, *****-ի, *****-ի և *****-ի օժանդակությամբ՝ նրանց վարած «VOLVO FM 12.340» մակնիշի ***** հաշվառման համարանիշի, «SCANIA R500» մակնիշի ***** հաշվառման համարանիշի, «MAN TGA 26.363» մակնիշի ***** հաշվառման համարանիշի, «SCANIA CP 19» մակնիշի ***** վրացական հաշվառման համարանիշի և «MERCEDES BENZ ACTORS» մակնիշի ***** վրացական հաշվառման համարանիշի բեռնատար ավտոմեքենաներով 2022 թվականի հունիսի 24-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 16-ը ներառյալ 21 դեպքով պարբերաբար ***** Հանրապետությունից արտահանել են հագուստներ՝ որպես ՀՀ-ում գրանցված «*****», «*****», «*****» և «*****» ՍՊ ընկերությունների անվամբ մատակարարվող ապրանքներ և դրանք Հայաստանի Հանրապետության տարածք ապօրինի ներմուծելու նպատակով Արևելյան մաքսատուն-վարչության *****-***** մաքսային կետ-բաժին

յուրաքանչյուր անգամ մոտեցել են միրգ-քանջարեղենով և հագուստով բեռնված երկու բեռնատար ավտոմեքենաներով, որտեղ սկզբում ռենտգեն զննության է ենթարկվել միրգ-քանջարեղենով բեռնված ավտոմեքենան, որից հետո դրա վրա փակցվել են հագուստով բեռնված ավտոմեքենայի հաշվառման համարանիշերը, և նույն ավտոմեքենան կրկին ռենտգեն զննության է ենթարկվել՝ հագուստով բեռնված ավտոմեքենայի փոխարեն: Բացի այդ, մաքսային մարմիններին ներկայացված մաքսային հայտարարագրերում նույնպես մտցրել են կեղծ տվյալներ՝ հագուստները ձևակերպելով որպես «*****», «*****» և «*****» ՍՊ ընկերությունների անվամբ ներմուծվող ձմերուկ, կարտոֆիլ, արքայաճարինջ և մանդարին: Նկարագրվածի արդյունքում *****-ի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն ապօրինի ներմուծվել է ընդհանուր՝ 437.436.905,52 դրամին համարժեք 1.078.569 ԱՄՆ դոլար մաքսային արժեքով 209.404 կիլոգրամ հագուստ, որի արդյունքում պետական բյուջե չի վճարել առանձնապես խոշոր չափերով՝ 154.632.772 դրամի մաքսատուրք և 113.341.748 դրամի ավելացված արժեքի հարկ, ընդհանուրը՝ 267.974.520 դրամ:

Ահարոն Լյովայի Ալվանդյանը, հանդիսանալով բեռնատար ավտոմեքենայի վարորդ, տեղյակ լինելով ***** , ***** և *****-ների, *****-ի, *****-ի, *****-ի և *****-ի կողմից նկարագրված եղանակով առանձնապես խոշոր չափերով հարկերից խուսափելու դիտավորության մասին՝ օժանդակել է վերջիններիս՝ մատուցել ապրանքների փոխադրման ծառայություններ և 2022 թվականի հունիսի 24-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 16-ը ներառյալ առնվազն 14 դեպքով *****-ի Հանրապետությունից հագուստների՝ որպես հիշյալ ՍՊ ընկերությունների անվամբ մատակարարվող ապրանքների արտահանումը և դրանց Հայաստանի Հանրապետության տարածք ապօրինի ներմուծումն ապահովելու և խոչընդոտները վերացնելու համար Արևելյան մաքսատուն-վարչության *****-***** մաքսային կետ-բաժին յուրաքանչյուր անգամ իր կողմից վարած բեռնատար ավտոմեքենայով մոտեցել է մեկ այլ բեռնատարի վարորդի հետ, որոնցից մեկը բեռնված է եղել հագուստով, իսկ մյուսը՝ միրգ-քանջարեղենով, որից հետո սկզբում ռենտգեն զննության են ներկայացրել միրգ-քանջարեղենով բեռնված ավտոմեքենան, ապա փոխել են ավտոմեքենաների

համարանիշերը՝ հազուարով բեռնված ավտոմեքենայի հաշվառման համարանիշերը տեղադրել միրգ-բանջարեղենով բեռնված բեռնատարին, իսկ միրգ-բանջարեղենով բեռնվածին՝ հազուարով բեռնվածի բեռնատարին և նույն ավտոմեքենան կրկին ներկայացրել ռեսուրսային զննության՝ հազուարով բեռնված ավտոմեքենայի փոխարեն, այդ կերպ ապահովելով հազուարով բեռնված ավտոմեքենայի առանց զննությունն անցնելու մաքսային հսկողության գոյուց դուրս գալը՝ թաքցնելով այդ ապրանքների ՀՀ ներմուծման հանգամանքը, որն էլ իր հերթին անխոչընդոտ հնարավորություն է ստեղծել մաքսային մարմիններին ներկայացված մաքսային հայտարարագրերում կեղծ տվյալներ մտցնել՝ հազուարները ձևակերպելով որպես հիշյալ ընկերությունների անվամբ ներմուծվող ձմերուկ, կարկոֆիլ, արքայանարինջ և մանդարին:

Ահարոն Ալվանդյանը նկարագրված արարքով օժանդակել է՝ ******-ի* Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն ապօրինի ներմուծել ընդհանուր առնվազն՝ 301.558.427,6 դրամին համարժեք 742.654 ԱՄՆ դոլար մաքսային արժեքով 140.616 կիլոգրամ հազուար, որի արդյունքում պետական բյուջե չի վճարել առանձնապես խոշոր չափերով առնվազն՝ 104.692.129 դրամի մաքսատուրք և 76.631.541 դրամի ավելացված արժեքի հարկ, ընդհանուրը՝ 181.323.665 դրամ (...):»¹:

4.1. Մնացական Ներսիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 46-290-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքի համար, որ «(...) [Ն]/ա, հանդիսանալով բեռնատար ավտոմեքենայի վարորդ և տեղյակ լինելով, որ *******, ******* և ******-ները*, «*******» ՍՊ ընկերության տնօրեն ******-ը*, «*******» ՍՊ ընկերության տնօրեն ******-ը*, «*******» ՍՊ ընկերության տնօրեն ******-ը* և «*******» ՍՊ ընկերության տնօրեն ******-ը* նախքան հանցանքն սկսելը համաձայնության են եկել համարել ******-ի* Հանրապետությունից Հայաստանի Հանրապետության տարածք մաքսային հսկողությունից թաքցնելու, ներմուծված ապրանքների ոչ հավասարի հայտարարագրման եղանակով ապօրինի հազուարներ ներմուծելու և այդ կերպ

¹ Տե՛ս քրեական վարույթ, հատոր 19, թերթեր 461-463:

ստանձնապես խոշոր չափերով հարկեր չվճարելու շուրջ՝ խոչընդոտներ վերացնելով
 օժանդակել է նրանց՝ իրականացրել ապրանքների փոխադրում, որի արդյունքում
 *****-ի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն ապօրինի
 ներմուծվել է ընդհանուր առնվազն՝ 96.571.134 դրամին համարժեք 240.432 ԱՄՆ
 դոլար մաքսային արժեքով 50.557 կիլոգրամ հազուար, որի արդյունքում պետական
 բյուջե չի վճարվել ստանձնապես խոշոր չափերով առնվազն՝ 36.578.730 դրամի
 մաքսատուրք և 25.096.198 դրամի ավելացված արժեքի հարկ, ընդհանուրը՝
 61.674.927 դրամ:

Այսպես.

*****, ***** և *****-ները, «*****» ՍՊ ընկերության փնօրեն *****-ը,
 «*****» ՍՊ ընկերության փնօրեն *****-ը, «*****» ՍՊ ընկերության փնօրեն
 *****-ը և «*****» ՍՊ ընկերության փնօրեն *****-ը նախքան հանցանքն
 սկսելը համաձայնության են եկել համարել *****-ի Հանրապետությունից
 Հայաստանի Հանրապետության տարածք մաքսային հսկողությունից թաքցնելու,
 ներմուծված ապրանքների ոչ հավասարի հայտարարագրման եղանակով ապօրինի
 հազուարներ ներմուծելու շուրջ: Բեռնատար ավտոմեքենայի վարորդներ
 *****-ի, *****-ի, *****-ի և *****-ի օժանդակությամբ՝ նրանց
 վարած «VOLVO FM 12.340» մակնիշի ***** հաշվառման համարանիշի, «SCANIA
 R500» մակնիշի ***** հաշվառման համարանիշի, «MAN TGA 26.363» մակնիշի
 ***** հաշվառման համարանիշի, «SCANIA CP 19» մակնիշի ***** վրացական
 հաշվառման համարանիշի և «MERCEDES BENZ ACTORS» մակնիշի *****
 վրացական հաշվառման համարանիշի բեռնատար ավտոմեքենաներով 2022
 թվականի հունիսի 24-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 16-ը ներառյալ 21
 դեպքով պարբերաբար *****-ի Հանրապետությունից արտահանել են
 հազուարներ՝ որպես ՀՀ-ում գրանցված «*****», «*****», «*****» և
 «*****» ՍՊ ընկերությունների անվամբ մատակարարվող ապրանքներ և
 դրանք Հայաստանի Հանրապետության տարածք ապօրինի ներմուծելու
 նպատակով Արևելյան մաքսատուն-վարչության *****-***** մաքսային
 կետ-բաժին յուրաքանչյուր անգամ մոտեցել են միրգ-բանջարեղենով և հազուարով
 բեռնված երկու բեռնատար ավտոմեքենաներով, որտեղ սկզբում ոենտրոն

զննության է ենթարկվել միրգ-բանջարեղենով բեռնված ավտոմեքենան, որից հետո դրա վրա փակցվել են հազուստով բեռնված ավտոմեքենայի հաշվառման համարանիշերը, և նույն ավտոմեքենան կրկին ռենտգեն զննության է ենթարկվել՝ հազուստով բեռնված ավտոմեքենայի փոխարեն: Բացի այդ, մաքսային մարմիններին ներկայացված մաքսային հայտարարագրերում նույնպես մրցրել են կեղծ տվյալներ՝ հազուստները ձևակերպելով որպես «*****», «*****» և «*****» ՍՊ ընկերությունների անվամբ ներմուծվող ձմերուկ, կարտոֆիլ, արքայանարինջ և մանդարին: Նկարագրվածի արդյունքում *****-ի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն ապօրինի ներմուծվել է ընդհանուր՝ 437.436.905,52 դրամին համարժեք 1.078.569 ԱՄՆ դոլար մաքսային արժեքով 209.404 կիլոգրամ հազուստ, որի արդյունքում պետական բյուջե չի վճարել առանձնապես խոշոր չափերով՝ 154.632.772 դրամի մաքսատուրք և 113.341.748 դրամի ավելացված արժեքի հարկ, ընդհանուրը՝ 267.974.520 դրամ:

*****-ը, հանդիսանալով բեռնատար ավտոմեքենայի վարորդ, տեղյակ լինելով *****, ***** և ****-ների, *****-ի, *****-ի, *****-ի և *****-ի կողմից նկարագրված եղանակով առանձնապես խոշոր չափերով հարկերից խուսափելու դիտավորության մասին՝ օժանդակել է վերջիններին՝ մատուցել ապրանքների փոխադրման ծառայություններ և 2022 թվականի հունիսի 24-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 16-ը ներառյալ առնվազն 5 դեպքով *****-ի Հանրապետությունից հազուստների՝ որպես հիշյալ ՍՊ ընկերությունների անվամբ մատակարարվող ապրանքների արտահանումը և դրանց Հայաստանի Հանրապետության տարածք ապօրինի ներմուծումն ապահովելու և խոչընդոտները վերացնելու համար Արևելյան մաքսատուն-վարչության *****-***** մաքսային կեր-բաժին յուրաքանչյուր անգամ իր կողմից վարած բեռնատար ավտոմեքենայով մուրեցել է մեկ այլ բեռնատարի վարորդի հետ, որոնցից մեկը բեռնված է եղել հազուստով, իսկ մյուսը՝ միրգ-բանջարեղենով, որից հետո սկզբում ռենտգեն զննության են ներկայացրել միրգ-բանջարեղենով բեռնված ավտոմեքենան, ապա փոխել են ավտոմեքենաների համարանիշերը՝ հազուստով բեռնված ավտոմեքենայի հաշվառման համարանիշերը տեղադրել միրգ-բանջարեղենով բեռնված

բեռնատարին, իսկ միրգ-քանջարեղենով բեռնվածինը՝ հագուստով բեռնվածի բեռնատարին և սույն ավտոմեքենան կրկին ներկայացրել ռենտգեն զննության՝ հագուստով բեռնված ավտոմեքենայի փոխարեն, այդ կերպ ապահովելով հագուստով բեռնված ավտոմեքենայի առանց զննություն անցնելու մաքսային հսկողության գոյուց դուրս գալը՝ թաքցնելով այդ սպրանքների ՀՀ ներմուծման հանգամանքը, որն էլ իր հերթին անխոչընդոտ հնարավորություն է ստեղծել մաքսային մարմիններին ներկայացված մաքսային հայտարարագրերում կեղծ տվյալներ մտցնել՝ հագուստները ձևակերպելով որպես հիշյալ ընկերությունների անվամբ ներմուծվող ձմերուկ, կարտոֆիլ, արքայաճաշիկ և մանդարին:

*****-ը նկարագրված արարքով օժանդակել է՝ *****-ի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն ապօրինի ներմուծել ընդհանուր առնվազն՝ 96.571.134 դրամին համարժեք 240.432 ԱՄՆ դոլար մաքսային արժեքով 55.557 կիլոգրամ հագուստ, որի արդյունքում պետական բյուջե չի վճարել առանձնապես խոշոր չափերով առնվազն՝ 36.578.730 դրամի մաքսատուրք և 25.096.198 դրամի ավելացված արժեքի հարկ, ընդհանուրը՝ 61.674.927 դրամ (...):²:

5. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի սեպտեմբերի 2-ի որոշման համաձայն՝ «(...) Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ինչպես բխում է սույն որոշման 2-րդ և 2.1.-րդ կետերում առկա մեղադրանքների փաստական նկարագրությունից ենթադրյալ արարքները ենթադրաբար կատարվել են «ՀՀ Արևելյան մաքսատուն-վարչության *****-***** մաքսային կետ-բաժնի տարածքում», այսինքն՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքից դուրս՝ ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում:

(...) Ամփոփելով սույն որոշման 4-6-րդ կետերում արձանագրված դատողություններն ու եզրահանգումները՝ Դատարանը հանգում է այն հետևության, որ թիվ ԵԴ1/1475/01/25 քրեական գործն ըստ մեղադրանքի Ահարոն Լյովայի Ալվանդյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-290-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և Մնացական Խաչիկի Ներսիսյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-290-րդ

² Տե՛ս քրեական վարույթ, հատոր 19, թերթեր 471-473:

հողվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, ընդդադրյալ է Երևան քաղաքի առաջին արյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, ուստի այն ըստ արածքային ընդդատության պետք է փոխանցել ՀՀ Լոռու մարզի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարան: (...)»³:

6. Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի սեպտեմբերի 12-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված արարքի կատարումը ենթադրում է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ հարկերը, տուրքերը կամ այլ վճարները առանձնապես խոշոր չափերով չվճարելը: Սույն դեպքում Ահարոն Ալվանդյանին և Մնացական Ներսիսյանին ներկայացված մեղադրանքի բովանդակությունից երևում է, որ նրանք մեղադրվում են մաքսային մարմիններին ներկայացված մաքսային հայտարարագրերում կեղծ տվյալներ մտցնելու եղանակով պետական բյուջե առանձնապես խոշոր չափերով հարկեր և տուրքեր չվճարելու օժանդակելու մեջ:

Դատարանը փաստում է, որ դատավոր Գ.Պողոսյանի որոշումից պարզ է, թե ինչու է դատարանը եկել համոզման, որ ենթադրյալ հանցանքները կատարվել են «ՀՀ Արևելյան մաքսատուն-վարչության *****-*****» մաքսային կետ-բաժնի արածքում և ըստ այդմ՝ ՀՀ Լոռու մարզի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական արածքում: 2025 թվականի սեպտեմբերի 02-ին կայացած դատական նիստի ձայնագրման սկավառակի ուսումնասիրությունից կարելի է ենթադրել, որ դատարանը դրա համար հիմք է ընդունել այն, որ ըստ հանրային քրեական հետապնդման որոշումների՝ ավտոմեքենաների պետհամարանիշները փոխվել, իսկ այնուհետև՝ կեղծ տվյալներով մաքսային հայտարարագրերը ներկայացվել են *****-ի մաքսակետում, որպիսի գործողությունների կատարմամբ էլ հանցանքներն ավարտվել են, քանի որ հետագա հարկային պարտավորություններն առաջացել են արդեն իսկ ներկայացված մաքսային հայտարարագրերի հիման վրա, ուստի անկախ այն հանգամանքից, թե հետագայում հարկեր ու տուրքեր կվճարվեին, թե ոչ՝ հանցանքի ավարտման տեսանկյունից դա որևէ նշանակություն չունի, քանի որ մաքսային

³ Տե՛ս քրեական վարույթ, հատոր 21, թերթեր 63-66:

հայտարարագրերը ներկայացնելու պահից հանգանքն արդեն իսկ ավարտվել է: Հանրային մեղադրողի այն դիտարկմանը, որ մաքսային հայտարարագիրը մաքսակերպում չի ներկայացվում, այլ այն ներկայացվում է մի քանի օր անց՝ պետական եկամուրների կոմիտե, որի հիման վրա էլ առաջանում են հարկային պարտավորությունները, դատավորն իր անհամաձայնությունն է հայտնել՝ նշելով, որ առանց մաքսային հայտարարագրի ներկայացման ավտոմեքենան չէր կարող դուրս գալ մաքսային և շարունակել իր երթևեկությունը: Հանրային մեղադրողը միաժամանակ հայտնել է, որ իր կարծիքով հանցանքը *****-ում չի ավարտվել, քանի որ դրանից հետո պետական եկամուրների կոմիտե պետք է ներկայացվեն համապատասխան փաստաթղթեր, առաջանա հարկ վճարելու պարտավորություն և արդեն իսկ ներկայացված փաստաթղթերի հիման վրա հաշվարկվի և իրականացվի հարկերի վճարումը:

Թեև գրնում եմ, որ դատարանի պարճառաբանությունները պետք է շարադրված լինեն դատական ակտում և դատախոսների ընթացքում դատավորի ասված խոսքի հիման վրա եզրակացության գալը կարող է տարրնկալումների պարճառ հանդիսանալ, այնուամենայնիվ իմ անհամաձայնությունն եմ հայտնում դատավոր Գ.Պողոսյանի դիրքորոշման հետ, քանի որ իմ կարծիքով ենթադրյալ հանցանքն ավարտվել է ոչ թե ավտոմեքենաների պետհամարանիշները փոխելով և մաքսակերպում կեղծ փյալներ ներկայացնելով, այլ հետագայում հարկ վճարող սուբյեկտի կողմից օրենքով սահմանված ժամկետներում հարկեր, տուրքեր կամ այլ վճարներ վճարելու պարտավորությունը չկատարելու պահից: Սույն քրեական գործով անձինք մեղադրվում են ոչ թե կեղծիք կատարելու, այլ մաքսային հայտարարագրի մեջ կեղծ փյալներ մտցնելու միջոցով հարկերը պակաս վճարելու համար, և փյալ դեպքում ավտոմեքենաների համարանիշները փոխելով և մաքսային հայտարարագրի մեջ կեղծ փյալներ մտցնելով հանցանքը չի ավարտվում, այն ուղղակի հանցանքի կատարման եղանակներից և միջոցներից մեկն է:

Ինչ վերաբերվում է դատավոր Գ.Պողոսյանի այն դիտարկմանը, որ կեղծ փյալներով մաքսային հայտարարագիրը լրացվել է մաքսային կերպում և առանց դրա տրանսպորտային միջոցը չէր կարող տեղաշարժվել, ապա պետք է փաստել, որ

քեռներ ներմուծող տրանսպորտային միջոցները երրորդ երկներից Հայաստանի Հանրապետություն մուտք են գործում արդեն իսկ լրացված տարանցման հայտարարագրով (տարանցման հայտարարագիրը ներկայացվում է այն ապրանքների փոխադրման համար, որոնք տրանսպորտային (փոխադրման) մեկ փաստաթղթով տեղափոխվում են մեկ ուղարկողի կողմից մեկ սրացողի հասցեով), որտեղ նշված է մեքենայի մակնիշը, ապրանքի տեսակը, քաշը և այլն, այն լրացնում է ուղարկող մաքսային մարմինը: ՀՀ մաքսային ծառայությունը ստուգում է արդեն իսկ լրացված տարանցման հայտարարագրի մեջ նշվածի իսկությունը, և եթե խնդիրներ չի հայտնաբերում, ապա բաց է թողնում տրանսպորտային միջոցը՝ տարանցիկ հայտարարագրի վրա կնիք դնելով: Այլ խոսքով՝ մաքսակետում ապրանք ներմուծող տրանսպորտային միջոցի վարորդը որևէ փաստաթուղթ չի լրացնում:

Միևնույն ժամանակ գտնում եմ, որ նմանատիպ իրավիճակներից խուսափելու նպատակով վարույթն իրականացնող մարմինն իր դատավարական փաստաթղթերում պետք է հստակ նշի հանցանքի կատարման վայրը, քանի որ նախնական դատախոսների ընթացքում ընդդատության հարցի քննարկման ժամանակ դատարանը որպես ելակետ կարող է օգտագործել միայն հանրային քրեական հետապնդում հարուցելու որոշումը և մեղադրական եզրակացությունը, որևէ այլ ապացույց չի կարող հետազոտվել:

Սույն քրեական գործի նախնական ուսումնասիրությունից ակնհայտ է, որ մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել հանցանքի կատարման վայրը, հանրային քրեական հետապնդում հարուցելու որոշումներում և մեղադրական եզրակացության մեջ, ենթադրյալ հանցանքի կատարման տեղի վերաբերյալ որևէ տվյալ չկա: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի 4-րդ մասը հստակ սահմանում է, որ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման մեջ, ի թիվս այլնի, նշվում է մեղաագրվող արարքի կատարման տեղը: Օրենսդրի այս պահանջն ինքնանպատակ չէ, միայն դրա առկայության դեպքում կարելի է որոշել նախ՝ քրեական օրենքի գործողությունը՝ քրեական օրենքով նախատեսված արարքը Հայաստանի Հանրապետության տարածքում կամ տարածքից դուրս կատարվելու դեպքում, ինչպես նաև այն դատարանը, որին

ընդդատյա է քրեական վարույթը՝ այն մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկելիս:

Տվյալ դեպքում քրեական վարույթում առկա՝ ինչպես հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշումներում, այնպես էլ մեղադրական եզրակացության մեջ, ենթադրյալ հանցանքի կատարման վայրի վերաբերյալ որևէ նշում չկա, հետևաբար գրնում են, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով՝ քրեական գործը պետք է քննի մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի՝ ՀՀ քննչական կոմիտեի հարկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության գրվելու վայրի (ք.Երևան, Մամիկոնյանց 46/5) դատարանը՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը:

Վերոգրյալի հետ մեկտեղ գրնում են, որ սույն գործով առկա է անձի՝ դատական շրջապարույրի մեջ հայրնվելու, ողջամիտ ժամկետում գործի քննության և դրանից ածանցվող այլ իրավունքների խախտման իրական վրանգ: Մասնավորապես, գործի նյութերի համաձայն՝ վարույթի մասնավոր մասնակիցները և բոլոր վկաները քնակվում են Լոռու մարզից դուրս: (...)

Վերոգրյալ դիրքորոշումների և վերլուծությունների հիման վրա գրնում են, որ գործը պետք է ուղարկել ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին՝ ընդդատության հարցը լուծելու համար (...)»⁴:

Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.

7. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/1475/01/25 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

⁴ Տե՛ս քրեական վարույթ, հատոր 21, թերթեր 70-75:

8. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

9. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

9.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» հասկացությունը մեկնաբանելիս նշել է. «Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապարասիսան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»⁵:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ «Ներպետական դատական արյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»⁶:

10. Վճռաբեկ դատարանն անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակության վերաբերյալ իրավական դիրքորոշում է ձևավորել *Գևորգ Հարությունյանի* որոշմամբ⁷:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ «1. Առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդարյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում

⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

⁶ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

⁷ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:

2. Եթե վարույթը վերաբերում է առաջին աստիճանի ընդհանուր իրավասության տարբեր դատարանների դատական տարածքներում ենթադրաբար կատարված երկու կամ ավելի հանցանքներին, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը:

3. Եթե մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված՝ ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթի իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը: (...):»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության սրացած առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատալսումներ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նույն կետում մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:

(...)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում սրանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (...):»:

12. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Երևան քաղաքի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, փաստելով, որ մեղադրյալներ Ա.Ավանդյանին և Մ.Ներսիսյանին վերագրված ենթադրյալ հանցանքները կատարվել են «ՀՀ Արևելյան մաքսատուն-վարչության *****_***** մաքսային կետ-բաժնի տարածքում», որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ տարածքային ընդդատության Լոռու մարզի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին⁸:

⁸ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

- Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն իր անհամաձայնությունն է հայտնել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի որոշմանը՝ արձանագրելով, որ ենթադրյալ հանցանքն ավարտվել է ոչ թե ավտոմեքենաների պետհամարանիշները փոխելով և մաքսակետում կեղծ տվյալներ ներկայացնելով, այլ հետագայում հարկ վճարող սուբյեկտի կողմից օրենքով սահմանված ժամկետներում հարկեր, տուրքեր կամ այլ վճարներ վճարելու պարտավորությունը չկատարելով:

Բացի այդ, Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը նշել է, որ սույն քրեական վարույթի նյութերում ենթադրյալ հանցանքի կատարման վայրի վերաբերյալ որևէ նշում չկա, հետևաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա՝ մեղադրանքը պետք է քննի այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը⁹:

13. Սույն վարույթի փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ մեջբերված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է արձանագրել, որ համաձայն Ա.Ալվանդյանին և Մ.Ներսիսյանին ներկայացված մեղադրանքների՝ վերջիններս ենթադրաբար խոչընդոտներ վերացնելով օժանդակել են այլ անձանց՝ նախնական համաձայնությամբ պետական բյուջե առանձնապես խոշոր չափերով մաքսատուրք և ավելացված արժեքի հարկ չվճարելուն:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ սույն վարույթով մեղադրյալներին վերագրվող հանցանքն ավարտվել է ոչ թե նրանց կողմից ենթադրյալ օժանդակությանն ուղղված որոշակի գործողություններ կատարելով, ինչպիսի եզրահանգում է արել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, այլ համապատասխան սուբյեկտների կողմից ենթադրաբար մաքսային մարմիններին ներկայացված մաքսային հայտարարագրերում կեղծ տվյալներ մտցնելու եղանակով հարկերը և տուրքերը չվճարելով: Նման պայմաններում, հաշվի առնելով, որ մեղադրյալներին ներկայացված մեղադրանքներից պարզ չէ վերոնշյալ գործողությունների

⁹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

կատարման կոնկրետ վայրը, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով սույն վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

14. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/1475/01/25 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, հիմնավոր է:

15. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ թիվ ԵԴ1/1475/01/25 վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Ահարոն Լյովայի Ալվանդյանի և Մնացական Խաչիկի Ներսիսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-290-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով թիվ ԵԴ1/1475/01/25 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ